Վաղարշակ Հարությունյան

Ծնվել է 1956թ. ապրիլի 28-ին, Ախալքալաքում:

Կրթությունը՝

1978թ.	Կիրովի անվան բարձրագույն ռազմական ուսումնարան,
1991թ.	Մարշալ Գրեչկոյի անվան ռազմական ակադեմիա (Լենինգրադ),
1998թ.	Գլխավոր շտաբի ակադեմիա (Մոսկվա):

Աշխատանքային գործունեությունը՝

1978-1990թթ.	ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում,
1991-1992թթ.	ՀՀ ներքին գործերի փոխնախարար, զուգահեռաբար՝ ՀՀ պաշտպանության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ,
1992-1994թթ.	ԱՊՀ միացյալ զինված ուժերի գլխավոր հրամանատարության շտաբի պետի տեղակալ,
1994-1999թթ.	ԱՊՀ մասնակից պետությունների ռազմական համագործակցության կոորդինացման շտաբի պետի տեղակալ, ՀՀ զինված ուժերի ներկայացուցիչ,
1999-2000թթ.	ՀՀ պաշտպանության նախարար,

2020թ. օգոստոսի 19-ից՝ ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական,

2020թ. նոյեմբերի 20-ից մինչև 2021թ. հուլիսի 20-ը՝ ՀՀ պաշտպանության նախարար:

2022թ. հունվարի 5-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Մոսկվա):

Օտար լեզուներ՝

ռուսերեն, անգլերեն:

Այլ տվյալներ՝

1994թ. ստացել է գեներալ-մայորի զինվորական կոչում:

1996թ. ստացել է գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում:

Արժանացել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» շքանշանի, ՀՀ-ի, ԼՂՀ-ի, ԽՍՀՄ-ի, ՌԴ-ի, Բելառուսի, Բուլղարիայի, Տաջիկստանի և մի շարք այլ երկրների կողմից ստացել է մեդալներ, շքանշաններ, բարձրագույն այլ պարգևներ:

Ընտանեկան կարգավիճակ՝

ամուսնացած է: